

— Դաւիթ, էսաց, ի՞նչ կուռնիք:

— Իմ ջիւջ ախպէրն իս, էսաց Դաւիթ, դիւ գաես:

Էսաց. — Դեօրով զաննիք մէմէկու:

Էսաց. — Աուր սկուռնի. դիւ իմ ջիւջ ախպէրն իս, յըմեն մէկ իրեք դըրպ աը զարկի. յառէջ դիւ զարկ, վուր դիւ քան զը ջիւջ իս:

209. Դաւիթ կը կանգնը դաշտը մէջ:

Մէլըք Դաւթը մօտէն կը զատացըցը զծին, թուր կը քեշի, կը բռնը ձեռ, էն աեխէն հեռտտօմ կը քշի ձին, Դաւթըն աը զարկի:

Դաւիթ կըսի. — Ես՝ Մարութայ բանձը Աստուարածին խաչ պատրաստին, վար իմ աջ թիվին:

Մէլըք վուր էդա աեղէն կգեայ, աչքիւ կարմըր ի:

Չէ՛ վուր Դաւիթ էնու դիւ շման ի, քեանի էնու զօռ կայ, զթուրն էլ զարկի:

Խաչ պատրաստին, ծառայ կըլնեմ էնու քեարամաթին¹, ըզինք կտայ դիմաց թրին:

Թուր չը դպնը խաչին, սկի՛ զօռ չի տայ Դաւթըն:

210. — Մէլըք, էսաց Դաւիթ, էդա մէկ զարպ²:

Էսաց. — Խա՛, մէ՛կ:

Էսաց. — Մէլըք, մէ՛կ էլ զար:

Մէլըքն ի, հառտտա՛ւ, էսաց. — Իմ ձիու մանկզիլ³ քեչ էը, պա ձիու մանկզիլ շատացըցիմ:

Ձիու մանկզիլ զատացըց Դաւթը մօտէն, զատը դնաց, ըռըկէպ զարկից ձիուն, ձին քշից վար Դաւթըն, խաչ էլի զինք թրից թրը դէմ, էլի Դաւթըն բան չելաւ:

211. Էսաց. — Մէլըք, էդա էրկու:

Էսաց. — Խա՛, Դաւիթ, էդա էրկու:

Էսաց, — Մէլըք, շիւտ էրա, մէկ գարպն էլ զարկ:

Մէլըք մանկզիլ շա՛տ զատացըցուց. ըռըքէպ զարկից, շիւտ էկաւ. մէկ էլ թուր զարկից, խաչ էլի զինք էտուր թրը դէմաց. սկի Դաւթըն բան չըլաւ:

212. — Մէլըք, դիւ պրծա՛ր, էսաց Դաւիթ, իմ դեօրն⁴ ի:

Էսաց. — Խա՛, ախպէ՛ր, քեօ՛ դեօրն ի:

Մէլըք էսաց. — Դաւիթ, դիւ իզին կտան, իս էրթամ շատըը տակ պառկիմ, դիւ գեաս, ըժը զարկիս:

Էսաց. — Խա՛, գնա՛, պառկի:

1 Թրք. — Զօրութիւն:

2 Հարուստ:

3 Թրք. — Ասպարէզ:

4 Հերթ: